Ո՞Վ Է ՍԱ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՄԱՏ. 21.1-9

*1 Երբ մոտեցան Երուսաղեմին ու եկան Բեթփագե՝
Ձիթենյաց լեռը, այն ժամանակ Հիսուսն իր
աշակերտից երկուսին ուղարկեց, 2 ասելով. Գնացե՛ք
ձեր դիմացի գյուղը և այնտեղ անմիջապես կգտնեք մի
կապած էշ, ավանակն էլ հետը: Արձակե՛ք, ինձ մո՛տ
բերեք: 3 Եթե որևէ մեկը ձեզ ինչ-որ բան ասի,
ասացե՛ք, որ դրանք պետք են Տիրոջը, և նա իսկույն
դրանք կուղարկի:*

*4 Բայց այս ամենը եղավ, որպեսզի կատարվի
մարգարեի միջոցով ասված խոսքը. 5 «Սիոնի դստերն
ասե՛ք. Ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը՝ հեզ, էշի
ու քուռակի վրա նստած (Զաք. 9.9)»: 6 Աշակերտները
գնացին ու արեցին այնպես, ինչպես Հիսուսը նրանց
պատվիրեց. 7 Էշն ու ավանակը բերեցին, իրենց
հագուստները դրանց վրա գցեցին, և Հիսուսը դրանց
վրա նստեց: 8 Եւ Ժողովրդի միջից շատերն իրենց
հագուստները փռում էին ճանապարհին. ուրիշներն էլ
ծառերից ճյուղեր էին կտրում ու ճանապարհին փռում:
9 Եվ առջևից ու հետևից գնացող բազմությունը
աղաղակում էր ու ասում. «Օվսաննա՛ Դավթի Որդուն:
Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը. Օվսաննա՛
Բարձրյալին»: 10 Երբ Հիսուսը մտավ Երուսաղեմ,
ամբողջ քաղաքը դղրդաց: Հարցնում էին.* ***«Ո՞վ է սա»:***

Սա այս քարոզի և կյանքի հիմնական հարցն է:

Սա միայն այն ժամանակվա ժողովրդի հարցը չէ, այլ բոլոր ժամանակների հարցն է:

Ո՞վ է սա:

Լավ մարդ՞, լավ ուսուցիչ՞, լավ մարգարե՞
Կրոնական կերպա՞ր
Թե քո Թագավորը և Փրկիչը՞

- *Այս հարցը պահանջում է անձնական պատասխան:*

  Եվ հետաքրքիր է՝ նույն հարցը Հիսուսն էլ տվեց իր աշակերտներին.

  «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. ո՞վ եմ ես»:

  Իսկ դո՞ւք ինչ եք ասում իմ մասին. ո՞վ եմ:» (Մատթ. 16.13-17)

  ***16** Սիմոն Պետրոսը պատասխանեց ու ասաց. Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծու Որդին: Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. **17** Երանի՜ քեզ, Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, որովհետև ոչ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է:*

- *Ծաղկազարդը միայն ճյուղերի և գովասանքի մասին չէ. այն Աստծո Որդու ինքնության մասին է: Ո՞վ է այս Թագավորը, որ եկավ Երուսաղեմ:*

- *Շատերի համար այսօր էլ Հիսուսը՝ օգնական է, բժշկող է, խնդիր լուծող է, բայց ոչ Աստված, Փրկիչ, և Աստծո Որդի:*

Ի. Ո՞Վ Է ՍԱ — ՆԱ ԹԱԳԱՎՈՐՆ Է, ՈՐ ԵԿԱՎ ՔԵԶ ՀԱՄԱՐ

*Երբ մարդիկ հարցնում էին՝ **«Ո՞վ է սա»**, պատասխանը արդեն տրված էր Ծննդոցից մինչև Հայտնություն:*

Ծննդոց 49.10-11 – Չի պակասելու իշխանությունը Հուդայից, ոչ էլ օրենսդիրը՝ նրա երանքից, մինչև որ գա Սելովը. և Նրա՛ն են հնազանդվում ժողովուրդները: Նա իր ավանակին որթից կկապի և ազնիվ որթից՝... իր պատմուճանը կլվա գինով և իր հանդերձը՝ խաղողի արյամբ:

Սա փոխանորդ զոհն է Մորիայի լեռան վրա՝ Իսահակի փոխարեն:

Սա Սելովն է:
Սա խոստացված Թագավորն է:
Սա Խաղաղության Իշխանն է:
Սա Փրկիչն է:

Սա Եսայիա 53-ի տառապող Մեսիան է:

II. Ո՞Վ Է ՍԱ — ԹԱԳԱՎՈՐ, ՈՐ ԵԿԱՎ ՏԱՌԱՊԵԼՈՒ

Հիսուս Երուսաղեմ չմտավ գահ բարձրանալու համար, այլ՝ խաչ բարձրանալու:

Եսայիա 53

Մարդկանցից Նա անարգվեց ու մերժվեց, վշտի մարդ և ցավի տեղյակ. Եւ այնպիսին, ումից պետք է երես դարձնեինք. Անարգվեց և մենք Նրան չգնահատեցինք:

- *Ահա թե ինչու շատերը չհասկացան Նրան:*
- *Նա իրենց պատկերացրած Թագավորը չեր:*

Նրանք ինչ-որ բան հասկացել էին. Բայց նրանց ըմբռնումը ամբողջական չէր:

«Օվսաննա» նշանակում է՝ «Փրկի՛ր մեզ հիմա»:

Նրանց հույսը կենտրոնացած էր այս ժամանակավոր կյանքի վրա:

Հիշեք՝

Հնարավոր է՝ մարդիկ երգեն, գովերգեն և աղաղակեն Հիսուսի անունը, նույնիսկ մասնակցեն Ծաղկազարդի Կիրակին, բայց ***չճանաչեն Նրան իրականում****:*

III. Ո՞Վ Է ՍԱ — ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԹԱԳԱՎՈՐԸ

Ես եմ Ալֆան ու Օմեգան (սկիզբն ու վերջը),- ասում է Տերը՝ Աստված, նա, որ Է, որ էր և որ գալու է՝ Ամենակալը (Հայտ. 1.8, Եսայի 44:6, 48:12):

Զաքարիա 9.9 – ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը. նա արդար ու փրկագործ է, հեզ և էշի վրա հեծած...

Զաքարիա 9.10 – Եվ Եփրեմից բնաջինջ պիտի անեմ <u>կառքը և ձին</u>՝ Երուսաղեմից: Եվ պիտի կոտրվի պատերազմի աղեղը, և նա խաղաղություն է խոսելու ազգերին, և նրա իշխանությունը ծովից ծով է լինելու և գետից մինչև երկրի ծայրերը:

- *Զաքարիայի մարգարեության այս երկու համարներում ամփոփված է մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների նկարագիրը:*

- ***Հայտնություն 19–րդ գլխում Հիսուսը վերադառնում է՝ որպես հաղթող Թագավոր:***

5 Եվ գահից մի ձայն ելավ՝ ասելով. «Օրհնեցե՛ք մեր Աստծուն, նրա բոլոր ծառանե՛ր ու նրանից երկյուղողնե՛ր, փոքրե՛ր ու մեծե՛ր»: 6 Եվ լսեցի մի ձայն՝ նման մեծ բազմության և առատ ջրերի,

*ինչպես ձայնը ուժեղ որոտի, որ ասում էր. «Ալելո՛ւիա, որովհետև **թագավորեց Ամենակալ Տերը՝ Աստված**:*

11 Եվ տեսա երկինքը բացված, և ահա մի սպիտակ ձի, որի վրա նստողը կոչվում էր «Հավատարիմ» ու «Ճշմարիտ»: 12 Նա արդարությամբ է դատում ու պատերազմում: 13 Նրա աչքերը կրակի բոցի պես էին, ու նրա գլխի վրա բազում պսակներ կային: Նա ուներ գրված մի անուն, որ ոչ ոք չգիտեր, բացի իրենից: 14 Հագել էր արյունով ներկված զգեստ. նրա անունն էր «Բան Աստծու»: Եվ երկնային զորությունները, սպիտակ և մաքուր բեհեզ հագած, սպիտակ ձիերի վրա գնում էին նրա հետևից: 15 Նրա բերանից սրած սուր էր ելնում, որպեսզի նրանով ազգերին հարվածի. և նրանց հովվում է երկաթե գավազանով: 16 Նրա զգեստի և ազդրի վրա գրված էր անունը՝ «ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ՈՒ ՏԵՐԵՐԻ ՏԵՐ»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: